ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մարտի 2015թ. թիվ 42-Ա

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Նախագահի 1997թ. մայիսի 6- ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և ի կատարումն ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 22- ի <<Պետությունը պաշտպանության նախապատրաստելու շրջանակներում 2015թ. զորավարժությունների և մարզումների անցկացման պլան- ժամանակացույցը հաստատելու մասին>> թիվ 72-ԱԳ որոշման՝

որոշում եմ.

1. ՀՀ Տավուշի մարզում 2015թ. ապրիլի 10- ին անցկացնել շտաբային ուսումնավարժություն <<Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը հակառակորդի հարձակման դեպքում>> թեմայով:
2. Նշանակել ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչության պետ փրկարար ծառայության գնդապետ Վ. Հովսեփյանին:
3. Ուսումնավարժությանը ընդգրկել՝

1) ՀՀ Տավուշի մարզպետարանին,

2) <<Քաղաքացիական պաշտպանության>> մարզային ծառայություններին,

3) Մարզային տարահանման հանձնաժողովին,

4) Պահեստային կառավարման կետի աշխատանքային խմբերին,

5) Իջևան քաղաքի զորահավաքային մարմնին,

6) Իջևանի զինկոմիսարիատին,

7) ՀՀ Տավուշի մարզային փրկարարական վարչությանը:

4. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

1) կազմակերպել ուսումնավարժության պլանավորող փաստաթղթերի ժամանակին մշակումը և հաստատումը համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացույցային պլանի,

2) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացույցային պլանի,

3) ուսումնավարժության անցկացման պատրաստ լինելու մասին զեկուցել ս/թ ապրիլի 6- ին:

5. ՀՀ Տավուշի մարզի տարահանման հանձնաժողովի նախագահ Լ. Սարգսյանին՝

1) ճշգրտել << ՀՀ Տավուշի մարզի տարահանման պլան>>- ը,

2) ստուգել տարահանման հանձնաժողովի ընդունման և տեղաբաշխման կետերի պատրաստությունը,

3) ճշտել տարահանման և տեղաբաշխման համար օգտագործվող տրանսպորտի քանակը, տարահանվող բնակչության հաշվարկը ըստ բնակավայրերի տեղաբաշխման:

6. <<Քաղաքացիական պաշտպանության>> մարզային ծառայությունների պետերին՝ լրամշակել և ճշգրտել ծառայությունների <<Քաղաքացիական պաշտպանության>> և <<Զորահավաքային պլանները>>:

7. Սույն որոշմանը ծանոթացնել ուսումնավարժության մասնակիցներին:

8. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

12.03.2015թ
ք. Իջևան